ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2015 թվականի N 118-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՊԱՆԻ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ-ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏԵՍՈՒՉԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով և հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի 2015թ. սեպտեմբերի 10-ի <<Քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագիրը հաստատելուն և քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում փոփոխություններ կատարելուն համաձայնություն տալու մասին>> N 788-Ա որոշումը, **որոշում եմ՝**

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության գլխավոր մասնագետ-փախստականների գծով տեսուչի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-3.2-37) անձնագիրը՝ համաձայն հավելվածի:

2.ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Կապանի սոցիալական ծառայության տարածքային գործակալության՝

ա) պետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-2.3-15) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5.Գործակալության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության գլխավոր մասնագետներից մեկը:

Գործակալության պետը Գործակալության գլխավոր մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>,

բ) գլխավոր մասնագետի (ծածկագիր՝ 68-3.2-20) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5.Գործակալության գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության պետը կամ Գործակալության մյուս գլխավոր

մասնագետը:

Գործակալության գլխավոր մասնագետը Գործակալության պետի, Գործակալության այուս գլխավոր մասնագետի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>,

գ) առաջատար մասնագետ-հաշվապահի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-4.1-15) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության առաջատար մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության երկրորդ կարգի մասնագետը կամ Գործակալության մասնագետներից մեկը:

Գործակալության առաջատար մասնագետը Գործակալության երկրորդ կարգի մասնագետի կամ Գործակալության մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>,

դ) երկրորդ կարգի մասնագետի քաղաքացիական ծառայության պաշտոնի (ծածկագիր՝ 68-4.3-6) անձնագրի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության երկրորդ կարգի մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության առաջատար մասնագետը կամ Գործակալության մասնագետներից մեկը:

Գործակալության երկրորդ կարգի մասնագետը Գործակալության առաջատար մասնագետի, Գործակալության մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>,

ե) Գործակալության մասնագետների քաղաքացիական ծառայության պաշտոնների (ծածկագրեր՝ 68-4.3-(8-10)) անձնագրերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

<<5. Գործակալության մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Գործակալության երկրորդ կարգի մասնագետը կամ Գործակալության մասնագետներից մեկը:

Գործակալության մասնագետը Գործակալության երկրորդ կարգի մասնագետի, Գործակալության մասնագետներից մեկի բացակայության դեպքում փոխարինում է նրանց:>>:

3.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին. ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

2015.սեպտեմբերի 15
ք. Կապան